ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ ՇՄՆԷՊԾ-ՄԱԾՁԲ-25/29

ք.Երևան

«24» «Հոկտեմբեր» 2025թ.

Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Լ. Ալեքսանյանի, ով գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Հ. Եսայանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Ինտերնետ» ցանցի մուտքի ապահովման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջների:

1.2. Ծառայությունը մատուցվում է Պայմանագրի Հավելված №1-ով սահմանված Տեխնիկական բնութագրին համապատասխան և Հավելված №2-ով սահմանված ծառայության մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2. Եթե մատուցվել է Պայմանագրի Հավելված №1-ին և/կամ Հավելված №2-ին չհամապատասխանող ծառայություն.

ա) չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի Հավելված №1-ով և/կամ Հավելված №2-ով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3. Կատարողն իրավունք ունի՝

2.3.1. Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4. Կատարողը պարտավոր է՝

2.4.1. Պայմանագրի Հավելված №1-ով և/կամ Հավելված №2-ով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3. Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի

միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված №3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2. Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3. Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4. Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

Պայմանագրով սահմանված Ծառայության համար վճարումը կատարվում է Կատարողի կողմից հաշիվ-ապրանքագիրը ներկայացնելուց հետո 20 (քսան) բանկային օրվա ընթացքում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.1. Պատվիրատուն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի 7.13 կետով նախատեսված ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրով նախատեսվող վճարման ժամանակացույցով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2. Պայմանագրի Հավելված №1-ում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը Պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3. Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4. Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Պատվիրատուի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը :

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց

առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի №№ 1; 2, 3 և 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12. Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13. Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայություն ք.Երևան, Ա. Արմենակյան 129 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն ՀՀ 900011023265 ՀՎՀՀ 00476409	«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ Ք. Երևան Ազատության 24/1 Հայէկոնոմբանկ Հ/Հ 163004038861 ՀՎՀՀ 02500052
Digitally signed by ALEKSANYAN LUSINE 7212860204	Signed by: KAREN ASATURYAN 4010830662 Date: Wed, 19 Mar 2025 09:35:58 GMT+04:00
Լ.Ալեքսանյան ---------- (ստորագրություն)	Հ. Եսայան -
Կ.Տ	Կ.Տ.

Հավելված №1
«24» «Մարտ» 2025թ. կնքված
«ՇՄՆԷՊԾ-ՄԱԾՁԲ-25/29» ծածկագրով պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
Էկոպարեկային ծառայության
գլխավոր քարտուղար
Լ. Ալեքսանյան

~~Digitally signed by~~
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի
տնօրեն
Հ. Եսայան

(սս
Signed by: KAREN ASATURYAN 401083066
Date: Mon, 24 Mar 2025 12:03:14 GMT+04:0
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ծառայության				
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	**գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)**	**Ամբողջական անվանումը**	**տեխնիկական բնութագիրը**	**Ծառայության մատուցման ժամկետ**
1	32411130	«Ինտերնետ» ցանցի մուտքի ապահովման ծառայություններ	**<u>Ինտերնետ կապի ծառայություններ մալուխային կամ օպտիկամանրաթելային կամ շարժական ռադիոմոդեմով.</u>** • կապի միացման համար անհրաժեշտ սարքավորման ծրագրային փաթեթների կարգաբերում և նոր ստեղծված ծրագրերի պարբերաբար թարմացում, • ինտերնետ կապի արագությունը 100 Մբիթ/վրկ, անսահմանափակ, • շուրջօրյա, ամսվա բոլոր օրերին, • անհրաժեշտության դեպքում՝ հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում, • օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում, • ծառայության հետ կապված ծրագրային ապահովում, • պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով), • երթուղիչների և անհրաժեշտ այլ սարքավորումների տրամադրում, մոնտաժում և կարգաբերում, • մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն, • ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուին, • ըստ անհրաժեշտության տվյալների փոխանակման քաղվածքների տրամադրում: **Հասցե՝** **Ք. Երևան Արմենակյան 129,**	մինչև 2025թ. դեկտեմբերի 25

2	32411130	«Ինտերնետ» ցանցի մուտքի ապահովման ծառայություններ	**<u>Ինտերնետ կապի ծառայություններ մալուխային կամ օպտիկամանրաթելային կամ շարժական ռադիոմոդեմով.</u>** • կապի միացման համար անհրաժեշտ սարքավորման ծրագրային փաթեթների կարգաբերում և նոր ստեղծված ծրագրերի պարբերաբար թարմացում, • ինտերնետ կապի արագությունը 35 Մբիթ/վրկ, անսահմանափակ, • շուրջօրյա, ամսվա բոլոր օրերին, • անհրաժեշտության դեպքում՝ հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում, • օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում, • ծառայության հետ կապված ծրագրային սպահովում, • պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով), • երթուղիչների և անհրաժեշտ այլ սարքավորումների տրամադրում, մոնտաժում և կարգաբերում, • մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն, • ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուին, • ըստ անհրաժեշտության տվյալների փոխանակման քաղվածքների տրամադրում: **Հասցե՝** **Հայաստան, Սյունիք, համայնք Գորիս, քաղաք Գորիս, փողոց Սյունիք 15**	մինչև 2025թ. դեկտեմբերի 25

3	32411130	«Ինտերնետ» ցանցի մուտքի ապահովման ծառայություններ	**<u>Ինտերնետ կապի ծառայություններ մալուխային կամ օպտիկամանրաթելային կամ շարժական ռադիոմոդեմով,</u>** • կապի միացման համար անհրաժեշտ սարքավորման ծրագրային փաթեթների կարգաբերում և նոր ստեղծված ծրագրերի պարբերաբար թարմացում, • ինտերնետ կապի արագությունը 35 Մբիթ/վրկ, անսահմանափակ, • շուրջօրյա, ամսվա բոլոր օրերին, • անհրաժեշտության դեպքում՝ հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում, • օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում, • ծառայության հետ կապված ծրագրային ապահովում, • պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով), • երթուղիչների և անհրաժեշտ այլ սարքավորումների տրամադրում, մոնտաժում և կարգաբերում, • մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն, • ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուին, • ըստ անհրաժեշտության տվյալների փոխանակման քաղվածքների տրամադրում: **Հասցե՝** **Հայաստան, Սյունիք, համայնք Մեղրի, գյուղ Շվանիձոր, փողոց 1-ին, շենք 20**	մինչև 2025թ. դեկտեմբերի 25

Հավելված № 2
«___» «_____» 2025թ. կնքված
№ ՇՄՆԷՊԾ-ՄԱԾՁԲ-25/29 պայմանագրի

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Շրջակա միջավայրի նախարարության
էկոպարեկային ծառայություն
ք.Երևան, Ա. Արմենակյան 129
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011023265
ՀՎՀՀ 00476409

Digitally signed by
ALEKSANYAN LUSINE
Լ.Ալեքսանյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
Ք. Երևան Ազատության 24/1
Հայէկոնոմբանկ
Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052

Հ. Եսայան ----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Ծառայության (Ծառայությունների) նկարագիրը, քանակը և սակագները

ՀՀ դրամ

N	Նկարագրություն	Մեկ միավորի ամսավճար*	Մբիթ/վրկ	Ամսավճար*	Հասցեներ
1	Կորպորատիվ ինտերնետ Static IP/29	75000	100	75000	ք.Երևան, Արմենակյան 129 շենք
2	FTTH ինտերնետ Static IP	25500	35	25500	Հայաստան, Սյունիք, համայնք Գորիս, քաղաք Գորիս, փողոց Սյունիք 15
3	FTTH ինտերնետ Static IP	25500	35	25500	Հայաստան, Սյունիք, համայնք Մեղրի, գյուղ Շվանիձոր, փողոց 1-ին, շենք 20
ԸՆԴԱՄԵՆԸ				***126000***	

*Ծառայության ամսավճարներում ներառված է ԱԱՀ: